

ԳՆԵԼ ԻՄ ՓՈԽԱՐԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«Գնել իմ փոխարեն ծառայություն» - Որևէ օկլայն խանութից հաճախորդի նշած ապրանքի գնում և հաճախորդի նշած «Իզիտրանս» ընկերության արտասահմանյան պահեստ ապրանքի առաքման պատվիրում:

Հաճախորդ – ֆիզիկական անձ

Ապրանք – «Գնել իմ փոխարեն» ծառայության միջոցով կարող է ձեռքբերվել ապրանքներ, որոնց գնումը և տեղափոխումը թույլատրված է ինչպես ձեռքբերման երկրի, այնպես էլ՝ ՀՀ օրենսդրությամբ: «Գնիր իմ փոխարեն» ծառայության միջոցով **չի կարելի ձեռք բերել** գեյմ, զինամթերք, թանկարժեք մետաղների ձուլակտորներ կամ ջարդոն, արտարժույթ, վտանգավոր, պայթուցիկ կամ շուտ հրկիզվող նյութեր, կենդանիներ, միջատներ, դեղորայք, խմիչք:

«Գնել իմ փոխարեն» ծառայությունից օգտվելու համար Հաճախորդը «Իզիտրանս» ընկերության իր անձնական էջի «Գնել իմ փոխարեն» բաժնի համապատասխան դաշտում տեղադրում է իր նախընտրած ապրանքի հղումը, ինչպես նաև պարտադիր լրացնում է ապրանքի գնի, քանակի, գույնի, չափի, արժեքի դաշտերը և կատարում վճարումը, որն իր մեջ ներառում է ինչպես ապրանքի գինը, այնպես էլ «Գնել իմ փոխարեն» ծառայության արժեքը:

Խանութ – օկլայն խանութ, որից ձեռք բերվելիք ապրանքի դիմաց վճարումը հնարավոր չէ իրականացնել ՀՀ բանկային քարտերով կամ որը չի իրականացնում գնված ապրանքի առաքում «Իզիտրանս» ընկերության արտասահմանյան պահեստ:

«Գնել իմ փոխարեն» ծառայության միջոցով պատվերը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում «Իզիտրանս» ընկերությունը հաստատում է և կատարում է պատվերում նշված ապրանքի ձեռք բերումը կամ մերժում է պատվերի հաստատումը: Մերժման դեպքում «Իզիտրանս» ընկերությունը կատարում է պատվերի գումարի հետվերադարձ, որն իր մեջ ներառում է ինչպես ապրանքի գինը, այնպես էլ «Գնել իմ փոխարեն» ծառայության արժեքը:

Պատվերի ձեռք բերման գնային առաջարկին համաձայնվելուց հետո, եթե վաճառողի կողմից տեղի է ունեցել ապրանքի գնի մինչև 3%-ի չափով բարձրացում, ապա ապրանքի ձեռք բերման համար Հաճախորդի լրացուցիչ համաձայնությունը չի պահանջվում: Հաճախորդը պարտավորվում է փաստացի վճարված գումարի և սույն կետում նշված գնի փոփոխության արդյունքում առաջացած գումարի տարբերությունը վճարել «Իզիտրանս» ընկերությանը՝ ապրանքը ստանալիս: Պատվերը Հաճախորդի կողմից հաստատվելուց հետո վաճառողի մոտ ապրանքի գնի 3%-ից ավել չափով բարձրացման դեպքում պատվերի ձեռք բերման համար Հաճախորդը նոր գնի և ծառայության արժեքի մասով պետք է տա իր համաձայնությունը: «Գնել իմ փոխարեն» ծառայությունը չի ներառում «Իզիտրանս» ընկերության արտասահմանյան պահեստից մինչև ՀՀ ապրանքի առաքման արժեքը, ինչպես նաև ՀՀ-ում մաքսային վճարումներ առաջանալու դեպքում դրանց արժեքը:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔ

Ծառայության արժեքը կազմում է ապրանքի արժեքի 5% տոկոսը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Իզիտրանս» ընկերությունը չի կրում որևէ պատասխանատվություն

- Հաճախորդի նշած օնլայն խանութից ձեռքբերված ապրանքի՝ ձեռքբերման պատվերի համապատասխանության, որակի, չափի, գույնի, սարքինության, ամբողջականության և այլնի համար: Այս դեպքում, Հաճախորդն իր պահանջները ներկայացնում է անմիջականորեն օնլայն խանութին:
- Հաճախորդի նշած օնլայն խանութից գնված ապրանքը օնլայն խանութի կողմից փաստացի ընկերության պահեստ առաքելու, առաքման ժամկետների պահպանման համար, ինչպես նաև առաքման ընթացքում ապրանքի վնասման կամ կորստի համար: Այս դեպքում, Հաճախորդն իր պահանջները ներկայացնում է անմիջականորեն օնլայն խանութին:

«Իզիտրանս» ընկերությունը կրում է պատասխանատվություն, երբ գնված ապրանքի անհամապատասխանությունը առաջացել է «Իզիտրանս» ընկերության սխալի արդյունքում, մասնավորապես պատվիրվել է Հաճախորդի կողմից նշված պայմաններին չհամապատասխանող ապրանք: «Իզիտրանս» ընկերությունը պարտավորվում է Հաճախորդին վերադարձնել ապրանքի և «Գնել իմ փոխարեն» ծառայության արժեքը՝ պայմանով, որ Հաճախորդը պետք է ընկերությանը վերադարձնի ոչ պատշաճ ապրանքը: Ապրանքի և «Գնել իմ փոխարեն» ծառայության արժեքի հետ վերադարձը տեղի է ունենում ապրանքը «Իզիտրանս» ընկերությանը վերադարձնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնել իմ փոխարեն» ծառայության գնված պատվերը Հաճախորդի կողմից պետք է ստուգվի ապրանքը ստանալիս՝ Ընկերության աշխատակցի ներկայությամբ: Ապրանքի ստացման պահին ապրանքի անհամապատասխանության վերաբերյալ գրավոր դիմում չներկայացնելը դիտվում է որպես ծառայության պատշաճ կատարում և «Իզիտրանս» ընկերությունը ազատվում է հետագայում իր նկատմամբ ներկայացվելիք որևէ պահանջի կատարումից:

ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺ

Սույն պայմաններով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է սույն անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: